Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա
Национальная Академия Наук Армении
National Academy of Sciences of Armenia

Հայաստանի Կենսաբանական Հանդես
Биологический Журнал Армении
Biological Journal of Armenia

•Փորձարարական և տեսական հոդվածներ •Экспериментальные и теоретические статьи•
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 3(70), 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԿՆԵՐԻ ԿԱՐԳԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Ս.Խ. ՊԻՊՈՅԱՆ[1], Բ.Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ[2], Է.Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ[1], Տ.Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ[2], Ն.Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ[2], Հ.Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ[2]

[1]Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, s.pipoyan@gmail.com
[2]ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Կենդանաբանության ինստիտուտ, biology.arakelyan@gmail.com

Վերլուծված և ներկայացված են Հայաստանի ջրակալներում և գետերում մինչ այժմ հայտնի 48 ձկնատեսակի, 4 ենթատեսակի և մեկ հիբրիդային ձևի հայերեն անվանումներն ըստ նրանց կարգաբանական պատկանելության: Առաջարկվում է այդ անվանումներն այսուհետ շրջանառել բոլոր գիտական հիմնարկներում, ուսումնական հաստատություններում, գերատեսչություններում, զանգվածային լրատվական միջոցներում, օգտագործել թարգմանչական աշխատանքներում, դրանով իսկ նպաստելով ձկների հանրաճանաչության մեծացմանը Հայաստանի բնակչության լայն շրջանակներում:

Ձկներ – հայերեն անվանումներ – Հայաստանի ջրակալներ

Проанализированы и представлены армянские названия известных до настоящего времени в водоемах Армении 48 видов, 4 подвидов и одной гибридной формы рыб, в соответствии с их таксономической принадлежностью. Предлагается эти названия широко распространять во всех научных учреждениях, учебных заведениях, ведомствах, средствах массовой информации, использовать в переводческой практике, содействуя тем самым повышению узнаваемости рыб среди широких кругов населения Армении.

Рыбы – армянские названия – водоемы Армении

The Armenian names of 48 species, 4 subspecies and one hybrid form of fish inhabiting Armenia were analyzed and presented in accordance with their taxonomic affiliation. It is proposed these names to be widely disseminated in all scientific and educational institutions, departments, the media, and used in translation practices, thereby promoting the recognition of fish among a wide range of population of Armenia.

Fish – Armenian names – waterbodies of Armenia

Մինչ 1920-ական թվականները Հայաստանի ջրակալներում բնակվում էին 22 տեսակի պատկանող ձկներ, որոնցից մեկը՝ իշխանը *Salmo ischchan* ներկայացված էր 4 ենթատեսակներով [6, 7]: 1924-1927 թթ. ընթացքում Սևանա լճի ձկնարդյունավետության բարձրացման նպատակով այստեղ է ներմուծվել և հետագայում կլիմավարժվել սիգը: Այնուհետև, մալարիայի դեմ կենսաբանական պայքար մղելու նպատակով 1934 թ. Հայաստան է ներմուծվել Հյուսիսային Ամերիկայի ջրակալներում տարածված գամբուզիան, իսկ հետագայում, 1960-ական թվականներին, առանձին

ջրակալների բուսական պլանկտոնի և ջրային բույսերի պաշարները արդյունավետ օգտագործելու ապրանքային նպատակով՝ սպիտակ ամուրը և սպիտակ հաստաճակատը [2]: Հետագա տարիներին, ձկնաբուծության զարգացման նպատակով, Հայաստան են ներմուծվել կամ պատահականորեն ներթափանցել են բազմաթիվ նոր ձկնատեսակներ [10-13, 16], որոնք բնորոշ չէին մեր տարածաշրջանի համար և, հետևաբար, չունեին հայերեն համարժեք և համընդհանուր ընդունված անվանումներ: Միաժամանակ վերջին տարիների ընթացքում գիտական, գիտահանրամատչելի, ուսումնական, ուսումնաօժանդակ գրականության մեջ, պաշտոնական գրություններում ու կայքէջերում, ինչպես նաև այլ աղբյուրներում հրապարակված նյութերում հաճախ նույն ձկնատեսակին հայերենում տարբեր անվանումներով են կոչում, ինչն տարընթերցումներ է առաջացնում ընթերցողների մոտ: Ելնելով վերոգրյալից, մենք մեր առջև խնդիր ենք դրել միասնականացնել Հայաստանի ջրակալներում հանդիպող ձկների մինչ այժմ արծարծվող հայերեն անվանումները և երաշխավորել դրանց օգտագործումը բոլոր տիպի հրապարակումներում, ինչն էլ հանդիսանում է սույն աշխատանքի նպատակը:

Հայաստանի ջրակալներում տարածված առանձին ձկնատեսակների հայերեն անվանումների սահմանման համար մեր կողմից հաշվի են առնվել նախկինում տարբեր գրական աղբյուրներում հրապարակված անվանումները (աղ. 1):

Աղյուսակ 1. Հայաստանում տարածված ձկների կարգաբանական միավորների գործածական անվանումները գրական տարբեր աղբյուրներում

Լատիներեն անվանումներ	Ըստ Դադիկյանի, 1971 [2]	Ըստ Հայաստանի բնաշխարհի, 2006 [3]	Ըստ Գրիգորյանի, 2008 [1]	Ըստ Պիպոյանի, 2012 [4]	Ըստ Հայրապետյանի և ուրիշների, 2018 [5]
Salmo ischchan	Իշխան	Իշխան	Ֆորել Սևանի	Իշխան	Սևանի իշխան
Salmo ischchan gegarkuni	Գեղարքունի իշխան	Գեղարքունի	Գեղարքունի իշխան	Գեղարքունի	-
Salmo ischchan aestivalis	Ամառային իշխան	Ամառային իշխան	Իշխան ամառային	Ամառային իշխան	-
Salmo ischchan ischchan	Ձմեռային իշխան	Ձմեռային իշխան	Իշխան ձմեռային	Ձմեռային իշխան	-
Salmo ischchan danilewskii	Բոջակ իշխան	Բոջակ	Բոջակ իշխան /չախո, դոլակ/	Բոջակ	-
Salmo truta	Կարմրախայտ	Կարմրախայտ	Կարմրախայտ /ֆորել գետային/	Կարմրախայտ	Կարմրախայտ
Salmo caspius	Սաղմոն	-	Սաղմոն կասպյան	-	-
Oncorhynchuus mykiss	-	Ծիածանախայտ	Ֆորել ծիածանային	Ծիածանախայտ	Ծիածանախայտ ֆորել, ծիածանափայլ ֆորել
Coregonus lavaretus	Սևանի սիգ	Սիգ	Սիգ	Սիգ	Սիգ
Rhodeus sericeus	-	-	Դառնաձուկ սովորական	Դառնուկ	Դառնուկ
Barbus cyri	Քուռի բեղլու	Քուռի բեղլու	Բեղաձուկ Քուռի	Քուռի /Կուրի/ բեղլու, Քուռի /Կուրի/ բեղաձուկ	Կուրի բեղաձուկ
Barbus goktschaicus	Սևանի բեղլու	Սևանի բեղլու	Բեղաձուկ Սևանի	Սևանի բեղլու, Սևանի բեղաձուկ	Սևանի բեղաձուկ
Luciobarbus capito	Ճանար	Ճանար	Բեղաձուկ ճանարի /Ճանար/	Ճանար	Ճանար
Luciobarbus mursa	Մուրծա	Մուրծա	Բեղաձուկ Արաքսի/մուրծա/, մորազ, դուդա	-	Մուրծա Մուրծի
Capoeta sevangi	Սևանի կողակ	Սևանի կողակ	Սևանի կողակ	Սևանի կողակ	Սևանի կողակ
Capoeta capoeta	Քուռի կողակ	Քուռի կողակ	Քուռի կողակ	Քուռի կողակ	Կուրի կողակ
Carassius gibelio	-	Արծաթափայլ կարաս	Կարասաձուկ արծաթափայլ	Արծաթափայլ կարաս	Արծաթափայլ կարաս
Cyprinus carpio	Ծածան	Ծածան	Գետածածան /սազան/	Ծածան	Ծածան

Gobio gobio	-	Սովորական քառթակ	Քարթակ /խարակաձուկ/ սովորական	Սովորական քառթակ	Սովորական քառթակ
Romanogobio macropterus	Քառթակ	-	Քարթակ անդրկով-կասյան /Քուռի/	Քուռի քառթակ	Կուրի քառթակ
Pseudorasbora parva	-	Ամուրյան նրբաձկնիկ	-	-	Ամուրյան նրբաձկնիկ
Abramis brama		Բրամ	Բրամ	Բրամ	Բրամ
Blicca bjoerkna transcaucasica	Հայկական գուստերա	Գուստերա	Վտառաձուկ	Գուստերա	Փայլաձուկ /գուստերա/
Acanthobrama microlepis	Մանրաթե-փուկ	Մանրաթեփուկ	Սևահոնք /մանրաթեփուկ/	-	Մանրաթեփուկ
Alburnoides eichwaldii	Հայկական տառեխիկ	Արագաշարժ	Ճապալ սովորական հայկական	Արևելյան տառեխիկ	Արևելյան արա-գաշարժ, Արևելյան տա-ռեխիկ
Alburnus hohenackeri	Անդրկովկասյան սպիտակաձուկ	Անդրկովկասյան սպիտակաձուկ	Անդրկովկասյան կպչողաձուկ	-	Անդրկովկասյան սպիտակաձուկ
Alburnus filippii	Քուռի սպիտակաձուկ	Քուռի սպիտակաձուկ	Քուռի կամ Ֆիլի-պիի կպչողաձուկ	-	Կուրի սպի-տակաձուկ
Alburnus chalcoides	-	-	Շահմահի կասպյան	-	-
Leucaspius delineatus	-	Արծաթաձուկ	Արծաթաձկնիկ	Արծաթաձկնիկ	Արծաթաձուկ
Leuciscus aspius	Հաշամ	Հաշամ	Հաշամ սովորա-կան /ձիաձուկ/	Հաշամ	Հաշամ
Chondrostoma cyri	Ենթաբերան, արաբսյան ենթաբերան	Քուռի ենթաբերան	Ենթաբերան Քուռի	-	Արաբսյան են-թաբերան Կուրի ենթաբերան
Rutilus rutilus schelkovnikovi	Հայկական կարմրակն	Հայկական կարմրակն	Կարմրակն հայկա-կան /մանրաձա-ծան, լաստ/	Հայկական կարմրակն	Հայկական կարմրակն
Rutilus caspius	-	-	Կարմրակն կաս-պյան /վոբլա/	-	-
Squalius orientalis	Թեփուղ	Թեփուղ	Գլխաձուկ /թեփուղ/	Կովկասյան թեփուղ	Կովկասյան թեփուղ
Hypophtalmichthis nobilis	-	Խայտաբղետ հաստաճակատ	Խայտաբղետ հաստա-ճակատ	Խայտաբղետ հաստա-ճակատ	Խայտաբղետ հաստա-ճակատ
Hypophtalmi-chthys molitix	Լայնա-ճակատ	Սպիտակ հաստա-ճակատ	Հաստա-ճակատ	Սպիտակ հաստաճակատ	Սպիտակ հաստաճակատ
Ctenopharyngodon idella	Սպիտակ ամուր	Սպիտակ ամուր	Ամուր սպիտակ	Սպիտակ ամուր	Սպիտակ ամուր
Mylopharyngodon piceus	-	Սև ամուր	-	Սև ամուր	Սև ամուր
Oxynoemacheilus angorae	Անգորական լերկաձուկ	Անգորական լերկաձուկ	Մերկաձուկ անգորական	Անգորական լերկաձուկ	Անգորական լերկաձուկ
Oxynoemacheilus brandtii	Քուռի լերկաձուկ	Քուռի լերկաձուկ	Մերկաձուկ Քուռի	-	Կուրի լերկաձուկ
Sabanejewia aurata	Ծական	Ոսկեգույն ծական	Ծական ոսկեգույն	Ոսկեգույն ծական	Ոսկեգույն ծական
Silurus glanis	Լոքո	Սովորական լոքո	Լոքո սովորական /եվրոպական/	Սովորական լոքո	Սովորական լոքո
Ictalurus punctatus	-	Ջրանցքային լոքո	-	Ջրանցքային լոքոյիկ	Ջրանցքային լոքոյիկ
Perciformes	-	-	Պերկեսակերպեր	Պերկեսակերպեր	-
Percidae	-	-	Պերկեսայիններ	-	-
Sander lucioperca	-	-	Շիղաձուկ սովորական	Սուդակ	Սովորական շիղաձուկ
Neogobius fluviatilis	-	Ավազային գլիկաձուկ	Կապտաձուկ ավազային	Ավազային գլիկաձուկ	Ավազային գլիկաձուկ
Knipowitschia caucasica	-	Կովկասյան գլիկաձուկ	-	Կովկասյան գլիկաձուկ	Կովկասյան գլիկաձուկ
Gambusia holbrooki	Գամբուզիա	Միսիսիպյան գամբուզիա	Հոլբրուկի գամբուզիա	Հոլբրուկի գամբուզիա	Հոլբրուկի գամբուզիա

Gambusia affinis	Գամբուզիա	Միսիսիպյան գամբուզիա	Գամբուզիա սովորական	-	-
Huso huso	-	-	Թառափ	Բելուգա	-
Acipenser baerii	-	-	Մորե սիբիրյան	Սիբիրական թառափ	-
Acipenser ruthenus	-	-	Չուբա	Ստերլյադ	-
Acipenser stellatus	-	-	Զութիի	Սևրյուգա	-
Acipenser nudiventris	-	-	Սեպադունչ	-	-

Ձկների կարգերի և ընտանիքների համար սահմանված անվանումներին տվել ենք համապատասխանաբար «-կերպեր» և «-այիններ» վերջածանցները, ինչը մինչ այս առաջարկվել է Գրիգորյանի կողմից [1] և բառակազմական առումով համապատասխանում է այդ եզրույթներին տրվող լատիներեն “-formes” և “-dae” վերջնածանցներին: Առանձին տեսակներին տրվող հայերեն անվանումները սահմանելու համար հաշվի ենք առել տվյալ տեսակի լատիներեն անվանման էթիմոլոգիան: Այն դեպքերում, երբ գիտական ու գիտահանրամատչելի գրականության մեջ արմատացած է եղել ռուսալեզու գրականությունից վերցրած անվանումները, մենք այդ անվանումները թողել ենք անփոփոխ: Տարընթերցումներից խուսափելու համար յուրաքանչյուր կարգաբանական միավորի համար ներկայացրել ենք դրանց լատիներեն, անգլերեն և ռուսերեն անվանումները, հիմք ընդունելով ձկների դասակարգման մեջ լայնորեն ընդունված եզրութաբանությունը [4, 15, 17]:

Գրական աղբյուրների ուսումնասիրման [2, 6, 7, 10-14, 16] և գիտական շրջանակներում քննարկումների արդյունքում ստորև ներկայացնում ենք Հայաստանի ջրակալներում ներկայում հայտնի տեղաբնակ, ներմուծված, կլիմայավարժված, ներթափանցած կամ բուծվող 48 ձկնատեսակի, 4 ենթատեսակի և մեկ հիբրիդային ձևի հայերեն անվանումներն ըստ նրանց ցեղային, ինչպես նաև ընտանիքների և կարգերի պատկանելության (աղ. 2):

Աղյուսակ 2. Հայաստանի բնական և արհեստական ջրակալներում հանդիպող ձկների կարգաբանական միավորների անվանումները

Հայերեն	**Լատիներեն**	**Անգլերեն**	**Ռուսերեն**
Սաղմոնակերպեր	Salmoniformes	Salmonids	Лососеобразные
Սաղմոնայիններ	Salmonidae	Salmons	Лососевые
Իշխան	*Salmo ischchan*	Sevan trout	Севанская форель, ишхан
Գեղարքունի	*Salmo ischchan gegarkuni*	Gegharkuni	Гегаркуни
Ամառային իշխան	*Salmo ischchan aestivalis*	Summer bakhtak	Летний ишхан
Ձմեռային իշխան	*Salmo ischchan ischchan*	Winter bakhtak	Зимний ишхан
Բոջակ	*Salmo ischchan danilewskii*	Bojak	Боджак
Կարմրախայտ	*Salmo trutta*	Brown trout	Ручьевая форель
Կասպյան սաղմոն	*Salmo caspius*	Caspian trout	Каспийский лосось
Ծիածանախայտ*	*Oncorhynchus mykiss (=Parasalmo mykiss)*	Rainbow trout	Радужная форель
Սիգայիններ	*Coregonidae*	Whitefishes	Сиговые
Սիգ**	*Coregonus lavaretus*	Whitefish, lavaret	Сиг
Ծածանակերպեր	Cypriniformes	Cyprinid fishes	Карпообразные
Ծածանայիններ	Cyprinidae	Carps	Карповые
Դառնաձուկ**	*Rhodeus amarus*	European bitterling	Горчак
Կուրի բեղաձուկ	*Barbus cyri*	Kura barbel	Куринский усач
Սևանի բեղաձուկ	*Barbus goktschaicus*	Gokcha barbel	Севанский усач

Ճանար	*Luciobarbus capito*	Bulatmai barbel	Усач-чанари
Մուրծա	*Luciobarbus mursa*	Mursa	Мурца
Սևանի կողակ	*Capoeta sevangi*	Sevan khramicarp, Sevanian scrapper	Севанская храмуля
Կուրի կողակ	*Capoeta capoeta capoeta*	Khramicarp, scrapper	Куринская храмуля
Անդրկասպյան կողակ**	*Capoeta capoeta heratiensis*	Transcaspian scrapper	Закаспийская храмуля
Արծաթափայլ կարաս**	*Carassius gibelio*	Crucian carp	Серебряный карась
Ծածան	*Cyprinus carpio*	Common carp	Сазан
Սովորական քառթակ **	*Gobio gobio*	Gudgeon	Обыкновенный пескарь
Կուրի քառթակ	*Romanogobio macropterus*	South Caucasian gudgeon	Куринский пескарь
Ամուրյան նրբաձուկ**	*Pseudorasbora parva*	Stone moroko	Амурский чебачок
Բրամ**	*Abramis brama*	Bream	Лещ
Անդրկովկասյան գուստերա	*Blicca bjoerkna transcaucasica*	White bream, silver bream	Закавказская густера
Մանրաթեփուկ	*Acanthobrama microlepis*	Blackbrow bleak	Чернобровка
Արևելյան տառեխիկ	*Alburnoides eichwaldii*	Kura chub	Восточная быстрянка
Անդրկովկասյան սպիտակաձուկ	*Alburnus hohenackeri*	North Caucasian bleak	Закавказская уклейка
Կուրի սպիտակաձուկ	*Alburnus filippii*	Kura bleak	Куринская уклейка
Կասպյան սպիտակաձուկ**	*Alburnus chalcoides*	Danube bleak, Caspian shemaya	Шемая
Արծաթաձուկ**	*Leucaspius delineatus*	Sunbleak, belica	Верховка, овсянка
Հաշամ	*Leuciscus aspius*	Asp	Хашам, жерех
Կուրի ենթաբերան	*Chondrostoma cyri*	Kura nase	Куринский подуст
Հայկական կարմրակն	*Rutilus rutilus schelkovnikovi*	Armenian roach	Армянская плотва
Կասպյան կարմրակն**	*Rutilus rutilus caspius*	Caspian roach	Каспийская плотва
Արևելյան թեփուղ	*Squalius orientalis*	Chub	Кавказский голавль
Խայտաբղետ հաստաճակատ*	*Hypophthalmichthys nobilis*	Bighead carp	Пестрый толстолобик
Սպիտակ հաստաճակատ*	*Hypophthalmichthys molitix*	Silver carp	Белый толстолобик
Սպիտակ ամուր*	*Ctenopharyngodon idella*	Grass carp	Белый амур
Սև ամուր*	*Mylopharyngodon piceus*	Black carp	Черный амур
Բալիտորայիններ	Nemacheilidae	Stone loaches	Балиторовые
Անգորական լերկաձուկ	*Oxynoemacheilus angorae*	Angora loach	Ангорский голец
Կուրի լերկաձուկ	*Oxynoemacheilus brandtii*	Kura loach	Куринский голец
Ծականայիններ	Cobitidae	True loaches	Вьюновые
Ոսկեգույն ծական	*Sabanejewia aurata*	Golden spined loach	Золотистая щиповка
Լոքոյակերպեր	Siluriformes	Catfishes	Сомообразные
Լոքոյիններ	Siluridae	Silurid	Сомовые
Սովորական լոքո	*Silurus glanis*	Wels catfish, sheatfish	Обыкновенный сом
Կատվալոքայիններ	*Ictaluridae*	Ictalurids	Кошачьи сомы
Ջրանցքային լոքոյիկ*	*Ictalurus punctatus*	Channel catfish	Канальный сомик
Պերկեսակերպեր	Perciformes	Perch-like fishes	Окунеобразные

Պերկեսայիններ	Percidae	Perches, darters	Окуневые
Գայլաձկնանման պերկես**	*Sander lucioperca*	Zander, pike-perch	Судак
Սովորական պերկես**	*Perca fluviatilis*	Perch	Обыкновенный окунь
Ցլիկաձկնայիններ	Gobiidae	Gobies	Бычковые
Ավազային ցլիկաձուկ**	*Neogobius fluviatilis*	Monkey goby	Бычок-песочник
Կովկասյան ցլիկաձուկ**	*Knipowitschia caucasica*	Caucasian dwarf goby	Кавказский бубырь
Ծածանատամնա-վորակերպեր	*Cyprinidontiformes*	Cyprinidonts	Карпозубообразные
Պեցիլայիններ	Poeciliidae	Livebearers, mosquito fishes	Пецилиевые
Հոլբրուկի գամբուզիա**	*Gambusia holbrooki*	Eastern mosquitofish	Гамбузия Гольбрука, гольбрукская гамбузия
Սովորական գամբուզիա**	*Gambusia affinis*	Western mosquitofish	Обыкновенная гамбузия
Օձաձկնակերպեր	Anguliformes	Eels	Угреобразные
Օձաձկնայիններ	Anguilidae	True eels	Угревые
Սովորական օձաձուկ*	*Anguilla anguilla*	Common eel	Обыкновенный угорь
Թառափակերպեր	Acipenseriformes	Sturgeons	Осетрообразные
Թառափայիններ	Acipenseridae	Sturgeons	Осетровые
Բելուգա*	*Huso huso*	Great sturgeon	Белуга
Սիբիրյան թառափ*	*Acipenser baerii*	Siberian sturgeon	Сибирский осетр
Ստերլյադ*	*Acipenser ruthenus*	Sterlet	Стерлядь
Սևրյուգա*	*Acipenser stellatus*	Starred sturgeon	Севрюга
Սեպադունչ թառափ*	*Acipenser nudiventris*	Bastard sturgeon	Шип
Բեստեր*	*Huso huso* × *Acipenser ruthenus*	Bester	Бестер

*- ձկնատեսակներ, որոնք բուծվում են Հայաստանի ձկնային տնտեսություններում, որտեղից կարող են պատահաբար հայտնվել բնական ջրակալներում կամ գետերում ու բնակվել այստեղ անորոշ երկար ժամանակ: Բնական պայմաններում հավաստի բազմացման դեպքեր դեռևս բացահայտված չեն:
**- ձկնատեսակներ, որոնք բնիկ չեն Հայաստանի ջրային էկոհամակարգերի համար, ներթափանցել և կլիմայավարժվել են տեղի պայմաններին վերջին տասնամյակների ընթացքում: Բազմանում են բնական պայմաններում:

Բացի վերոգրյալ կարգաբանական եզրույթներից, հայերենում բավական հաճախ օգտագործվում է «ֆորել» բառը, որը հաճախ տրվում է ծիածանախայտին՝ «ծիածանափայլ ֆորել» անվանմամբ, երբեմն նաև իշխանին՝ «ֆորել Սևանի» անվանմամբ [1]: Ընդհանուր առմամբ, «ֆորել» անվանում են անուշահամ ջրերում բնակվող սաղմոնայինների ընտանիքին պատկանող որոշ ձկների, որոնք պատկանում են սաղմոնների (*Salmo*), խաղաղօվկիանոսյան սաղմոնների (*Oncorhynchus*) և լերկ սաղմոնների (*Salvelinus*) ցեղերին: Ֆորելներ են համարվում նաև Հայաստանի ջրակալներում և գետերում տարածված իշխանը և կարմրախայտը: Հաշվի առնելով, որ «ֆորել» բառը օտարածին է, ծագում է գերմաներեն «Forelle» բառից, որը նշանակում է սև և կարմիր պտերով պատված ձուկ, առաջարկում ենք հայերենում «ֆորել» եզրույթի փոխարեն օգտագործել «խայտաձուկ» եզրույթը, որն ավելի բարեհունչ է և մատնանշում է դրա տակ հասկացվող ձկների արտաքին հատկանիշը՝ «խայտեր (պտեր) ունեցող ձուկ»:

Այսպիսով, մեր կողմից փորձ է կատարվել հայերենում ընդունված բառակազմական սկզբունքների հիման վրա ճշգրտել, հիմնավորել և կայունացնել Հայաստանում մինչ այժմ հայտնի բոլոր ձկների կարգաբանական միավորների հայերեն տարբեր, հաճախ չհիմնավորված անվանումները մեկ անվան տակ: Առաջարկվում է այդ անվանումներն այսուհետ շրջանառել բոլոր գիտական հիմնարկներում, ուսումնական հաստատություններում, գերատեսչություններում, զանգվածային լրատվական միջոցնե-

ում, օգտագործել թարգմանչական աշխատանքներում, դրանով իսկ նպաստելով ձկների հանրաճանաչության մեծացմանը Հայաստանում, ինչպես նաև հանրապետության ջրային էկոհամակարգերի պահպանությանն ուղղված միջոցառումների առավել արդյունավետ իրականացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորյան Հ.Ջ.* Հայերեն կենդանաբանական տերմինաբանություն (վերլուծություն և սկզբունքներ): ՀՀ ԳԱԱ §Գիտություն¦ հրատ., Երևան, 264 էջ, 2008:
2. *Դադիկյան Մ.Գ.* Հայաստանի ձկները: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 215 էջ, 1971:
3. Հայաստանի բնաշխարհ. Հանրագիտարան. Երևան, 692 էջ, 2006:
4. *Հայրապետյան Տ.Ա., Ավանյան Ա.Վ., Պապով Գ.Յ., Ղազարյան Ա.Ս.* Հայաստանի ողնաշարավորներ կենդանիների անվանումների լատիներեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան: Երևան. ԵՊՀ հրատ., 136 էջ, 2018:
5. *Պիպոյան Ս.* Ձկնաբանություն և ձկնաբուծություն: Երևան: ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ, 256 էջ, 2012:
6. *Барач Г.П.* Рыбы Армении. Тр. Севан. гидробиол. ст. *6*, с. 5-70, 1940.
7. *Державин А.Н.* Рыбы реки Кара-Су. Известия бакинской ихтиологической лаборатории. *II*, вып. 1, с. 161-184, 1926.
8. *Левин Б.А., Рубенян А.Р.* Аннотированный список ихтиофауны Армении. В кн. “Экология озера Севан в период повышения его уровня. Результаты исследований Российско-Армянской биологической экспедиции по гидроэкологическому обследованию озера Севан (Армения) (2005-2009 гг.)”. Наука ДНЦ, Махачкала, с. 229-242, 2010.
9. *Левин Б.А., Рубенян А.Р.* О новых ихтиологических находках в Армении. Российский журнал биологических инвазий, 1, с. 39-45, 2012.
10. *Пипоян С.Х.* Современная ихтиофауна рек Армении. Уч. записки. Армянский гос. педагогический ун-т им. Х. Абовяна, *11*, 1, с. 19-23, 2009.
11. *Пипоян С.Х.* Ихтиофауна Армении: этапы формирования и современное состояние. ISBN 978-3-8473-9977-3, 548 с., 2012.
12. *Пипоян С.Х.* Обнаружение речного угря *Anguilla anguilla* в водах Армении. Биолог. журн. Армении, *67*, 3, с. 104-106, 2015.
13. *Пипоян С.Х.,Тигранян Э.А.* Список рыб водоемов Армении. Биолог. журн. Армении, *51*, 4, с. 258-265, 1998.
14. *Пипоян С.Х., Тигранян Э.А.* Современная ихтиофауна Армении. Вопр. ихтиологии, *42*, 5, с. 601-604, 2002.
15. Пятиязычный словарь названий животных. Рыбы. Латинский-русский-английский-немецкий-французский. М., Рус.яз., 734 с., 1989.
16. *Gabrielyan B.K.* An Annotated Checklist of Freshwater Fishes of Armenia. Naga, The ICLARM Quarterly, 24, 3 & 4, July-Desember, p. 23-29, 2001.
17. http://www.fishbase.org.

Ստացվել է 22.06.2018